

ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ

Մ Ե Ր

Հ Ն Գ Ա Մ Յ Ա Կ Ը

---

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1980

633.5

բ - 25

6323-5 2013  
P-25

19.127

4 AUG 1944

# ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Մեր յերկրի ինդուստրիացման տեւպը և  
տեքստիլ արդյունաբերության արագ աճումը մի  
կողմից և կապիտալիստական աշխարհի հետ  
մեր ունեցած փոխհարաբերությունները մյուս  
կողմից, հրամայական պահանջ են դնում մեր  
առաջ ամենակարճ ժամանակամիջոցում ազատել  
մեր ժողովրդական տնտեսությունը կապիտալիս-  
տական յերկրներից ներմուծվող այն նյութերից  
և հումուլթից, վորոնք անհրաժեշտ են մեր ար-  
դյունաբերության համար: Այդ իսկ պատճառով  
Համամիութենական Կոմկուսակցության (բ)  
Կենտկոմն անհրաժեշտ համարեց վերանայել բամ-  
բակագործության զարգացման պլանը: Լսելով  
Գլխամբակկոմի ղեկուցումը բամբակագործու-  
թյան դրության և նրա հետագա զարգացման  
մասին, Կուսակցության Կենտկոմը 1929 թվի  
հուլիսի 18-ին կայացրեց մի շարք կարևոր վո-  
րոշումներ: Կենտկոմը նշելով բամբակագործու-  
թյան զարգացման բացառիկ նշանակությունը  
Սորհրգային Միության ինդուստրիացման և  
տեքստիլ արդյունաբերության հումայութի բազան

Հրատ. № 1270

Գրառեպ. 5037 (բ) Պատ. № 365 Տիրութ 3000

Պետհրատի Յերկրորդ Տպարան Յերևանում



1881-7

ընդարձակելու տեսակետից, անհրաժեշտ համարեց բամբակագործության զարգացման թափը մաքսիմալ չափի հասցնել, հիմք ընդունելով բամբակագործության ընդարձակումը և նրա բերքատվության բարձրացումն այն հաշվով, վոր հնգամյակի վերջում՝ 1932 թվին միանգամայն ազատել Միության տեքստիլ արդյունաբերությունն արտասահմանից ներմուծվող բամբակից, այլև անհրաժեշտ ուեղերվ ստեղծել տեքստիլ արդյունաբերության հետագա զարգացման և լայնացման համար:

Համաձայն հնգամյա պլանի հիմնական ցուցանիշների նախատեսվում է՝ 1932 թվին Անդրկովկասյան Ֆեդերացիայի սահմաններում բամբակացանքսի տարածությունը հասցնել 300,000 հեկտարի, վորից 40,000-ը Հայաստանի սահմաններում: Հիշյալ տարածությունից Անդրկովկասում պետք է ստացվի մոտ 6,635,000 փ. գտած բամբակ, վորից 1,070,000 փութը Հայաստանի սահմաններում:

Կուսակցությունն Կենտկոմը միաժամանակ արձանագրելով հուլիսյան պլենումում կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների թույլ աճումը բամբակագործության բնագավառում, ինչպես նաև բամբակենու բերքատվության ցածր լինելու փաստը, նամանավանդ մեղ մոտ Անդր-

կովկասում, առաջարկեց այս խնդիրները ևս վերանայել:

Իկատարումն վերոհիշյալ դերեկտիվի Անդրկենտկոմն առաջարկել է հնգամյակի վերջում բամբակենու մշակման մեքենայացումը հասցնել 90%-ի. ըստ նույն վորոշման կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունները պետք է ընդգրկեն բամբակենու դաշտերի ամբողջ տարածության 100 տոկոսը, իսկ բերքատվության աճումը պիտի կատարվի 80 տոկոսով:

Այսպիսով, ուրեմն, Հայաստանի սահմաններում բամբակենու դաշտերի տարածությունը հնգամյակի ընթացքում ավելանալու յե ավելի քան 3 անգամ, այժմյան տարածություն հանդեպ: Միանգամայն հասկանալի յե, վոր նշված ծրագիրն իրացնելու համար անհրաժեշտ է հարվածային կարգով և արագ թափով ձեռնարկել միշարք խոշոր և կարևոր աշխատանքներ բամբակագործության զարգացմանը նպաստող բոլոր բնագավառներում: Անհրաժեշտ է նախ և առաջ բամբակագործական շրջաններից վտարել այն կուլտուրաները, վորոնք վոչ միայն չեն նպաստում բամբակենու սերմափոխության, այլև մեծ չափով խանգարում են բամբակենու մշակության անարգել զարգացմանը: Անհրաժեշտ է խոշորագույն չափով լայնացնել նաև վոռոգման ցանցը

բամբակագործական շրջաններում, վորպեսզի բամբակենու ցանքսերն ապահովված լինեն ջրով մաքսիմալ չափով: Բամբակենու տարածության ընդարձակումն ապահովելու համար անհրաժեշտ է ավելացնել վոռոգվող հողերի տարածությունը, վերասարքավորել և կարգի բերել իր հերթին բամբակագործական շրջաններում գտնվող բոլոր ջրմուղ մեքենաները (վոդոկաչկա):

Բերքատվութունը բարձրացնելու և նրա տեմպն ապահովելու տեսակետից առաջին հերթին պետք է վերանայել բամբակագործական տնտեսությունների ներկա տեխնիկական հնարավորությունները, փոխարինելով նահապետական գործիքները կատարելագործված գյուղատնտեսական մեքենաներով, վորի համար առաջին հերթին անհրաժեշտ է բամբակագործական շրջաններին մատակարարել հարկավոր քանակությամբ արակտորներ և զանազան տեսակի գյուղատնտեսական գործիքներ: Հնգամյակի վերջին չերեք տարվա ընթացքում կոլեկտիվ տնտեսություններ կազմակերպելու հետ զուգընթացաբար պետք է տարածել նաև գյուղատնտեսական գիտելիքներ բատրակ, չքավոր և միջակ գյուղացիական լայն մասսաների միջև, ծանոթացնելով վերջիններիս միաժամանակ բամբակենու զաշտերը մշակելու նորագույն ձևերին և

բարձրացնելով նրանց կուլտուրական մակարդակը բառիս ընդարձակ իմաստով:

Գյուղատնտեսական գիտելիքներ տարածելու նպատակով պետք է ընդարձակենք ագրոկայանների ներկա ցանցը: Խնչ ասել կուզի, վոր խոշոր գեր է կատարելու նաև բամբակագործական շրջաններն ելեկտրիֆիկացիայի լենթարկելու խնդիրը, վորն իր պատվավոր տեղն ունի հնգամյա ծրագրի սխեմայում:

Բերենք միջանի թվական տվյալներ բամբակ. հնգամյակից՝ պատկերն ավելի պարզորոշ դարձնելու համար:

| 1929 թվին ունեցել ենք                         |               | 1932 թ. պետք է ունենանք |       |
|-----------------------------------------------|---------------|-------------------------|-------|
| Բամբակենու տարածութ.                          | 13,200 հեկտ.  | 40,000                  | հեկտ. |
| վորից խորհրդ. տնտեսութ.                       |               | 2,200                   | »     |
| » կոլեկտիվ տնտեսութ.                          | 1,100 »       | 34,000                  | »     |
| » անհատական »                                 | 12,100 »      | 3,800                   | »     |
| Մեքենայակ. արակտ. կայան                       | —             | 3                       |       |
| Մեքենայակ. արակտոր. կայան-ներն ընդգրկելու յեն | —             | 34,000                  | հեկտ. |
| Գյուղատնտեսական ինվենտ.                       | —             | 4,811,000               | ռուբ. |
| վորոնց թվում արակտորներ                       | —             | 384                     | հատ   |
| Ձիերի ներմուծում                              | —             | 3,504                   | հատ   |
| Ագրոձեռնարկների կոմպլեքս                      | 3,100 հեկտ.   | 34,000                  | հեկտ. |
| Ագրոկայանների քանակը                          | 4             | 24                      |       |
| Կոլտնտեսությունների քան.                      | 63            | 193                     |       |
| վորոնց թվում կոմմունաներ                      | 4             | 48                      |       |
| Հացի ներմուծում (դեֆիցիտ)                     | 107,000 ցենտ. | 77,000                  | ցենտ  |

## Տրամագործ

|                            |   |        |
|----------------------------|---|--------|
| Նոր կառուցվող ճանապարհներ  | — | 50 կմ  |
| Ճանապարհների վերակառուցում | — | 53 »   |
| Թեթև ավտոմեքենաներ         | — | 15 հատ |
| Ապրանքատար                 | — | 71 »   |

## Կ ա դ ր Ե ր

|                        |          |          |
|------------------------|----------|----------|
| Բարձրագույն կրթությամբ | 105 հոգի | 217 հոգի |
| Միջնակարգ              | 18 »     | 128 »    |
| Վարչական գծով          | —        | 66 »     |
| Այլ գծով աշխատողներ    | 23 »     | 1,606 »  |

## Նյութատեխնիկական

|                                  |   |               |
|----------------------------------|---|---------------|
| Ընդհանուր ուժը                   | — | 2,228 կիլովատ |
| Վորից արդյունաբերության համար    | — | 754 »         |
| » մեքենայական վերանորոգումն.     | — | 434 »         |
| » մանր մոտորների նագրուղկայի հմ. | — | 429 »         |
| » կենցաղային կարիքների համար     | — | 611 »         |

Վերոհիշյալ աղյուսակը ցույց է տալիս, թե վորպիսի վիթխարի աշխատանք և ինչպիսի հրակայական գումարներ են պահանջվում առաջադրված խնդիրները մեր յերկրում կենսագործելու համար:

Ի՞նչ է նշանակում կասառել բամբակագործության հնգամյա ծրագիրը

Հնգամյա պլանի կատարումն ունի նախ և առաջ այն խոշոր նշանակությունը, վոր Միության տեքստիլ արդյունաբերությունը լիակատար չափով ազատվելու յե, ինչպես ասացինք վերը,

արտասահմանից ներմուծվող բամբակի գերությունից, վորի համար յուրաքանչյուր տարի խորհրդային կառավարությունը վճարում է կապիտալիստական յերկրներին ավելի քան 120 միլիոն ռուբլի վոսկով: Բացի դրանից, նա հաշվարություն է տալիս մեզ ստեղծելու պատկառելի ռեզերվ մեր տեքստիլ արդյունաբերության հետագա զարգացման և ընդարձակման համար: Սոցիալիստական սեկտորի աճումը գյուղական տնտեսության մեջ՝ կոոպերացման և կոլեկտիվացման միջոցով, խորհրդային տնտեսությունների աճման արագ ընթացքով՝ բնականաբար բարձրացնելու յե բամբակագործական շրջանների ազգաբնակչության տնտեսական և կուլտուրական մակարդակը, վորի հետևանքով վերջնականապես լիկվիդացիայի յե յենթարկվելու նշութական, կուլտուրական անհավասարությունը, վորը ցարական կառավարության գաղութային քաղաքականության թողած ժառանգությունն է յեղել մեզանում:

Բամբակագործության անարգել զարգացումը մեզանում առաջմղիչ ուժ է դառնալու գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում:

Պեժ Ե փոխել մեր կազմակերպությունների  
աշխատանքները մեքողը

Ինքնըստինքյան հասկանալի չէ, Վոր կու-  
սակցության առաջադրած խնդիրը հսկայական  
պատասխանատվություն է դնում մեզ վրա, և  
ներա կատարումը 3 տարվա ընթացքում պա-  
հանջում է մեզանից ուժերի և եներգիայի ան-  
սահման լարում: 1929 թվի բամբակի ցանքսերի  
փաստական տարածությունը Անդրկովկասում  
կազմում է մինչպատերազմյան տարածության  
94<sup>0</sup>/<sub>100</sub>-ը: Այսպիսով ուրեմն, բամբակի ցանքսերի  
տարածության աճումը վերջին տարիների ըն-  
թացքում ցույց է տալիս, Վոր վերականգնման  
պրոցեսսը մեզ մոտ ընթացել է դանդաղ և վոչ  
կանոնավոր ու պլանաչափ: Բամբակացանքսերի  
տարածությունը ըստ գործիքային ստուգման  
արդյունքների, մասնավորապես Հայաստանում,  
արտահայտվել է՝ 1924 թվին 14,530 հեկտա-  
րով, 1925 թվին—14,640, 1926 թվին—11,555,  
1927 թվին—10,651, 1928 թվին—14,300, 1929  
թվին—13,082:

Նույնը պետք է ասենք նաև բերքի քանա-  
կի մասին:

1924 թվին մեկ հեկտարից Հայաստանում  
ստացվել է 759 կիլոգրամ հնդավոր բամբակ և

1925 թվին—921 կիլոգրամ, 1926 թվին—667  
կիլոգրամ, 1927 թվին—1,078 կիլոգրամ, 1928  
թվին—795 կիլոգրամ և 1929 թվին—635 կիլո-  
գրամ:

Այս բոլոր թվերը ցույց են տալիս, Վոր  
բամբակագործությունն Անդրկովկասում և մաս-  
նավորապես Հայաստանում դեռևս չի հասել նա-  
խապատերազմյան մակարդակին, և գյուղատնտե-  
սության այս կարևոր ճյուղը չի ընթանում մեզ  
մոտ այն տեմպով, Վորը գոնե բավարար չափով  
համապատասխաներ մեր արագ թափով զարգա-  
ցող եկոնոմիկայի և մեր յերկրի ինդուստրիա-  
ման խոշոր տեմպին:

Այս անբավարար դրությունը պահանջում  
է մոբիլիզացիայի յենթարկել կուսակցական,  
խորհրդային մարմինների, տնտեսավարական և  
հասարակական կազմակերպությունների ամբողջ  
ուշադրությունը բամբակագործական հնգամյա  
պլանը լիովին կատարելու խնդրի վրա և, Վոր  
գլխավորն է, հիմնավորապես վերանայել մեր աշ-  
խատանքների ամբողջ սիստեմը:

Բամբակագործության հնգամյա պլանի կա-  
տարումը պետք է դառնա որվա խնդիր Վոչ  
միայն բամբակագործական կազմակերպությու-  
նների և բամբակագործական կոոպերացիայի հա-  
մար, այլև բոլոր մյուս կազմակերպություննե-

րի, նամանավանդ ջրային տնտեսութեան, Հող-  
ժողովմատի, բամբակագործական և այլ շահա-  
բերողիված հիմնարկների:

Հասուկ ու շահութաբեր պէտք է դարձնել վո-  
ոգման գործին

Ջրային սիստեմի ներկա դրութիւնը թույլ չի  
տալիս ընդարձակել մեզ մոտ բամբակի ցանք-  
սերի տարածութիւնը: Մեծ մասամբ բամբա-  
կագործական շրջաններում յեղած ջուրն ամբող-  
ջովին սպառվում է բամբակենին մշակելու ժա-  
մանակամիջոցում: Դեռ ավելին, մի շարք շրջ-  
աններում բամբակենու ցանքսերը բավարար  
չափով ջուր չեն ստանում, վորպիսի հանգա-  
մանքը՝ նախ՝ բացատրվում է նրանով, վոր ջրա-  
յին ցանցը անկանոն վիճակի մեջ է գտնվում  
շնորհիվ այն բանի, վոր լերկար տարիներ վե-  
րանորոգման չի լենթարկվել, և յերկրորդ՝ բամ-  
բակացանները խախտում են ջրոգտագործման  
տարրական կանոնները:

Այս խնդիրները կարգավորելու և բամբակա-  
գործութեան զարգացման թափն ուժեղացնելու  
համար հնգամյա պլանի համաձայն կատարվում  
են խոշոր շինարարական աշխատանքներ՝ ջրային  
ցանցը կարգավորելու, լայնացնելու և ընդար-  
ձակելու ուղղութեամբ: Հնգամյակի վերջում, ըստ

հաստատված պլանի, գոյութիւն ունեցող ջրա-  
յին սիստեմը վերակառուցելու և նոր ցանց  
կառուցանելու հետեանքով, բամբակի ցանքսե-  
րի համար պիտանի և նոր հողերի տարածու-  
թիւնն ավելանալու յե 22,000 հեկտարով,  
այսինքն ավելի բան 100%-ով ներկա տարա-  
ծութեան հանդեպ:

Պէտք է հիմնավարապես վերանայել գյուղատն-  
տեսութեան տնտեսական յեվ արտադրութեան յեղա-  
նակը բամբակագործական օրջաններում

Ամենակարևոր և կենսական խնդիրներից  
մեկը պետք է համարել հաւ բամբակի բերքա-  
տութեան բարձրացումը գյուղատնտեսութեան  
տեխնիկայի վերակառուցումը և սոցիալիստական  
սեկտորի ուժեղացումը, խնդիրներ, վորոնց ճիշտ  
և կանոնավոր լուծումից է կախված մեծ չա-  
փով բամբակագործութեան հնգամյա պլանի ի-  
րացումը:

Անհրաժեշտ է առաջիկա 3 տարվա ընթաց-  
քում բերքատութեան աստիճանը բարձրացնել  
մոտ 60%-ով (1929 թվին, ըստ պլանի, 8,85 ցենտ-  
ներ, 1932 թվին պետք է լինի 13,8 ցենտներ),  
վորպիսին հնարավոր է գյուղատնտեսութեան  
արտադրութեան յեղանակները և տեխնիկական

բազան հիմնովին վերակառուցման լենթարկելու և խոշոր կոլլեկտիվ ու խորհրդային բամբակագործական տնտեսություններ հիմնելու հետեւանքով:

Բերքատվության ցածր լինելու ամենահիմնական պատճառն այն է, վոր մեր գյուղացին լավ չի մշակում բամբակենու դաշտերը, շնորհիվ այն հանգամանքի, վոր նախ՝ չունի հարկավոր քանակությամբ բանվորական ձեռքեր և չերկրորդ՝ մշակութան համար անհրաժեշտ գործիչներ ու մեքենաներ: Իսկ տեխնիկական վերակառուցումը, գյուղատնտեսության մեքենայացումը կրնա նա արագ տեխնիկ միջոցն այն դեպքում, յեթե համայնացման լենթարկվեն բամբակագործական տնտեսությունների արտադրության միջոցները, այն է՝ կոլլեկտիվացման:

Հողն ու ջուրը պետք է ոգտագործել նպաստակա-  
նաբար և անվնաս

Բամբակենու ցանքսերի տարածությունը լայնացնելու ամենահիմնական աղբյուրներից մեկը, անկասկած, հանգիստանում է նաև մյուս մշակութայինների վտարումը բամբակագործական շրջաններից, վորտեղ բամբակի համար պիտանի և ջրով ապահովված հողամասերն անպայմանորեն և առաջին հերթին պետք է ոգտագործվեն բամ-

բակի մշակութան համար: Կարիք չկա մի ավելորդ անգամ կրկնելու, վոր ցանքսերի տարածությունը ընդարձակելու հիմնական պայմաններից մեկն է նաև ջրային սխտեմը կանոնավորելու, ջրոգտագործման խնդիրը կարգավորելու հարցը:

Ջրոգտագործման խնդիրները ըննության պետք է առնել գյուղացիների լայն խորհրդակցություններում, վորտեղ ղեկավար մասնակցություն պետք է ունենան գյուղատնտեսները, հիդրոտեխնիկները և ագրոկայանների աշխատակիցները: Այդ խորհրդակցություններում պետք է առաջին հերթին մշակել կայուն ժամկետներ և ջրելու նորմաներ:

Ցանքսերի կանոնավոր և ժամանակին ջրելը մեծ չափով կբարձրացնի բամբակի բերքը: Ինչ առել կուզի, վոր կուսակցական մարմինները տեղերում խիստ հսկողություն պետք է ունենան վերոհիշյալ ձեռնարկները ճիշտ կերպով կիրառելու խնդրում: Ջրոգտագործման խնդիրը կարգավորելու համար անհրաժեշտ է կազմակերպել նաև տեղերում մեխորատիվ ընկե-  
րություններ:

Բամբակի բերքը բարձրացնելու համար

Բամբակի մեկ հեկտարի միջին բերքը միջին Ասիայում ներկայումս հասնում է մինչև 60-63 փթի, մինչդեռ մեզ մոտ—Անդրկովկասում 35-40 փթից դենը չի անցնում: Այսպիսի ցածր բերքը բացարձակապես անհանդուրժելի է: Լայն բացատրական կամպանիա պետք է տանել բամբակացան գյուղացիների շրջանում և հասկացնել, Վոր բերքի այդ աստիճան ցածր լինելը փաստակար ե վոչ միայն գյուղացու տնտեսության, այլև մեր յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսության համար: Անհրաժեշտ է արտադրական խորհրդակցություններ հրավիրել բամբակագործական շրջաններում և մշակել վորոշ նորմաներ յուրաքանչյուր շրջանի համար, մասնակից դարձնելով այդ խորհրդակցություններին մասնագետ գյուղատնտեսներին: Այդ խորհրդակցություններում նախ և առաջ քննության պետք է առնվի, թե յերբ և ինչ ձևով պետք է կատարվի վար ու ցանքսը, ինչպես պետք է գործադրվեն պարարտանյութերը, ջրելու կարգն ու ժամանակը, բաղնանելը, բուկը յցնելը և փաստուռների դեմ տարվելիք պայքարը և նման բազմաթիվ խնդիրներ, վորոնց ճիշտ կիրառումը միայն հնարավորութուն կտա մեզ բարձրացնել

ու բերքատվության աստիճանը: Յուրաքանչյուր գյուղ պետք է ունենա իր աշխատանքի պլանը, վորը կազմվում է տվյալ գյուղի արտադրական խորհրդակցութուններում: Այդ պլաններում հատուկ նորմաներ պետք է մտցնել հողագտագործման և ջրագտագործման կարգի մասին: Մանրամասն պետք է նախատեսել, թե ինչպես պետք է ոգտագործվեն կոլխոզների տրամադրության տակ գտնվող կենդանի և մեռյալ ինվենտարն ու գյուղատնտեսական գործիքները: Մեր կազմվելիք պլաններում պետք է նախատեսել այն բոլոր հնարավորութունները, վորոնք ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստելու յեն բամբակագործության զարգացմանը:

Սոցիալիստական մեցման անհրաժեշտությունը

Գյուղի և կոլխոզի արտադրական պլանը հիմք պետք է հանդիսանա գյուղերի ու կոլխոզների և կոոպերատիվ ընկերությունների միջև սոցիալիստական մրցում կազմակերպելու համար: Սոցիալիստական մրցման ասպարիզում պետք է առաջնորդվեն հետևյալ հիմնական ցուցանիշներով.—

1) ամբողջությամբ յրացնել բամբակենու տարածության նշված պլանը:



2) մաքսիմալ չափով ընդարձակել բամբակի կուլտուրան, վտարելով մյուս կուլտուրաները բամբակագործական շրջաններից.

3) լրացնել և ռացիոնալ հիմքերի վրա դնել ջրոգտագործման յեղանակները.

4) վարը կատարել ժամանակին, մաքսիմալ չափով ոգտագործելով ագրոնոմիական բոլոր ձեռնարկումները:

Ինչ առել կուղի վոր վերոհիշյալ պլանը կենսագործելու համար անհրաժեշտ է բամբակագործական շրջաններն ապահովել հացով, մանուֆակտուրայով և առհասարակ գործարանային ապրանքներով՝ թեյով, շաքարով և այլն: Այս խնդրում մեծ անելիքներ ունի սպառողական կոոպերացիան, ուստի և անհրաժեշտ է ուժեղացնել կոոպերացիան առհասարակ և մասնավորապես բամբակագործական շրջաններում: Վետք է սահմանել միաժամանակ ուժեղ կոոպերով, վարպետի ապրանքների ու մթերքների բաշխումը կոոպերացիայի կողմից կատարվի կոոպի նախորդ և ծառայի իր անմիջական նպատակին:

Այս ամենը իվիճակի կլինենք հաջողությամբ կատարելու միայն այն դեպքում, յեթե կարողանանք մաքսիմալ չափով և նպատակահարմար ձևերով ոգտագործել գյուղի կուլտուրական ուժերը: Տարաբախտաբար մեզ մոտ

մինչև հիմա շրջանային գյուղատնտեսների և հիգրոտեխնիկների մի մասը գլխավորապես ըզբաղված են յեղել գրասենեկային և գործավարական բնույթ կրող աշխատանքներով, մինչդեռ գյուղատնտեսներն ու հիգրոտեխնիկներն ու նրանց կարգի աշխատավորները պետք է լինեն դաշտում ու հանդես գան գյուղացիական մասսան կազմակերպողի գերում, իրենց ուժերը մաքսիմալ չափով ոգտագործելով գործնական ու հիշողանի աշխատանքներով: Ինչ դեր չունի կատարելու այդ խնդրում նաև գյուղական ուսուցիչը, վորը գյուղատնտեսի ոգնականը պետք է լինի գյուղում. այդ է պատճառը, վոր գյուղական դպրոցը սերտորեն կապված պետք է լինի ագրոկաչանի, իսկ ուսուցիչը՝ գյուղատնտեսի հատուկ գյուղական դպրոցը պետք է դառնա ընդհանուր և գյուղատնտեսական անգրագիտությունը վերացնելու բազա:

Անխնա պայքար կուլակային տարրերի դեմ

Գյուղական տնտեսությունները և մասնավորապես բամբակագործական տնտեսությունները կուլեկտիվացման յենթարկելու խնդրում մեծամեծ խոչընդոտներ են հանդիսանում կուլակային տարրերը, վորոնք հուսահատական կոբվ են մղում կուլեկտիվացման գաղափարը հրահրողներին:

րի դեմ, շատ հաճախ գիմելով նույնիսկ տերրու-  
րի, ցուց- րելով այս դեպքում մեռնող դասա-  
կարգի բոլոր<sup>1</sup> արտահայտությունները և գործո-  
ղությունները: Պւժեղ հակահարված տալու հա-  
մար նման տարրերին՝ անհրաժեշտ է կազմա-  
կերպել բամբակացանների հիմնական մասսան,  
այսինքն չքավորներին և միջակներին, ներս  
գրավելով նաև բատրակ տարրերին՝ կուլակների  
դեմ վճռական պայքար մղելու համար: Բամբա-  
կագործական շրջանների բատրակ, չքավոր և  
միջակ գյուղացիներին պետք է կազմակերպել և  
հատկացնել, վոր բամբակագործության հնգամյա  
պլանի իրագործումը միակ յեղքն է, վոր պետք  
է ազատագրի նրանց կուլակի և վաշխառուի  
տիրապետությունից ու շահագործումից:

Ահա մոտավորապես այն կոնկրետ խնդիր-  
ները, վորոնց լիակատար կենսագործումը մի-  
այն հնարավորություն կտա մեզ դարձնելու մեր  
յերկիրը արդյունաբերական-կուլտուրական յեր-  
կիր՝ բառիս ամենալավ և ամենալայն իմաստով:  
Հնգամյա պլանի իրագործումը սոցիալիստական  
արշավի արագընթաց տեմպն ապահովելու ամե-  
նահիմնական գրավականն է:

&lt;&lt; Ազգային գրադարան



NL0280659